Սարգիսի բարեկենդան ուրբաթ օրը (Փետրուարի 13ին)։

Համար 2244ի գրիչ Տէր Աւետիսը օրինակել է Նոր Ջուղայի համար 60, 118, 489 եւ այլ գրչագրեր։ Քանի որ մի չարք գրչագրերում, ուր միայն Աւետիս երէցն է յիշւում, գրչագրերի թուականներն որոշ չեն, իսկ դրանց համեմատելն իր ժամանակին հնարաւոր չի եղել, դրանց մասին դժուար է վճռական խօսք ասել։

«Խորհրդատետր»երից առաջինը (հմր. 2258), գրել է Աւետ Սարկաւագը, իսկ պատուիրատուն՝ Տէր Խաչատուրը դրան ուղարկել է նուէր Երուսաղէմ, որի մասին այսպէս է գրում իր յիշատակագրութեան մէջ «Եմ տէր Խաչատուրս, այս սուրբ Խորհրդատետրս առաքեցի Սբ. Յերուսաղէմ, իմ սիրելի եղբաւր, Տէր Կիւրեղին. չուն որ եկն Իսպահան, մէկ Խորհրդատետր ուզեց, հազիր չընկաւ, եւ ես տէր Խաչատուրս, ես իմ կամօքս այս տետրիկս առաքեցի, որ յիշատակ լինի, իմ հոգոյս, իմ ծնողացս հոգոյն.....»։ Հետաքրքիր է, որ սրա յիշատակարանում յիշուած է նաեւ որ գրուեց «Զեռամբ անարժան Աւետ Սարկաւագի, ի թվականիս Հայոց ՌՃԿԱ (1712), յամսեանն Մարտի է (7)ում։ Ի յայսմ ժամանակի գրեցաւ զոր հոգեւոր տէրն Աղեքսանդր կաթուղիկոսն Էջմիածնայ եկաւ Սպահան, որ է Ջուղայ»։

«Երկրորդ «Խորհրդատետր»ի գրիչ եւ ծաղկող Խօջասարը ծաղկել է նաեւ Նոր Ջուղայի գրչագրերից համար 408 «Ճառընտիր»ը։

Հետաքրքրական է, որ չորս գրչագրերից «Ժամագիրք Ատենի»ն եւս յատուկ գրուել ու նուիրուել է Ս. Երուսաղէմի վանքին, որի մասին գրիչը յիշում է երկարօրէն եւ լուսաբանութիւններ տալիս։

Ութերորդ հատորում նկարագրուած են համար 2366–2800 գրչագրերը։ Այս ցուցակում եւս կան մի քանի գրչագրեր որ գրուել են Նոր Ջուղայում, ինչպէս մի «Սաղմոս» (համար 2367) գրուած 1747 թուին, վեց Աւետարան համար 2388 1669 թ.), համ. 2587 (1644 թ.), համ. 2610 (1654 թ.), համ. 2617 (1637 թ.), համ. 2666 (1720–33 թ.) եւ Հին կտակարանի մի մաս՝ համար 2544՝ գրչութեան թուականն անյայտ։

Սոյն հատորում կայ նաեւ հինգ գրչագիր Սիմէոն Վարդապետ Ջուղայեցու «Քերականութիւն» եւ «Տրամաբանութիւն» գրքերից, իսկ Աւետարաններից 60ից աւելին մագաղաթեայ, որի 56ը գտնւում են այն գրչագրերի մէջ, որոնց լրիւ ցուցակը տրուած չէ։

Համար 2472 «Շարական»ի մէջ կայ մի հետաքրքրական ծածկագիր, հայկական այբուբենի թուերի վրայով։ Ծածկագրի մէջ Խ տառի տեղ կամ դրան փոխարինող որպէս նշան, դրուած է ԺԺի, այսինքն երկու ժ (10) եւ մէկ Ի (20), որոնց գումարը լինում է 40, իսկ հայոց Այբուբենի մէջ քառասունին փոխարինում է Խ տառը։ Զ գրելու փոխարէն գրել է ՃՃՃՆ, երեք ճ, որ նշանակում է 300 եւ Ն, որ նշանակում է 400, գումար՝ 700, որ է Զ տառը։ Այդ գրութիւնը (էջ 141), վերծանուել է՝ «Խաչատուր վարդապետին է»։

Երկու հատորների մեկենասն եւս, ինչպէս եւ նախորդ բոլոր ու գալիք ամբողջ հատորներինը, եղել ու լինելու է Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը։ Երկու հատորներն եւս, ըստ անցեալների, ունեն մանրանկարների նմոյշներ, որոնք գեղեցիկ ճաշակ են տալիս գրչագրերի նկարազարդումների մասին։

Նոյ ոյժ ու եռանդ ենք մաղթում սիրելի Սրբազանին, որպէսզի ըստ կարելւոյն աւելի շուտ աւարտի իր այս խիստ օգտակար եւ կոթողային գործը։

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԽՃԱՆԿԱՐ ՀՈԳՈՒ ԵՒ ՔԱՐՏԷԶԻ ԳՈՅՆԵՐԻՑ

Գրեց
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Նրեւան, «Սովետական Գրող» Հրտ. 1976, էջ 512։

Սիլվա Կապուտիկեանը Հայրենիքի մեր լաւագոյն բանաստեղծուհիներից մէկն է, որին ճանաչում է իւրաքանչիւր դպրոցական աշակերտ անգամ։ Եթէ կան ոմանք որ չեն կարդացել նրա արձակ գրութիւնները, ապա վստահաբար, բազմաթիւ անգամներ՝ թէ՛ ընտանեկան հաւաքոյթներում եւ թէ դպրոցական ու մշակութային զանազան հանդէսներում ու տօնախմբութիւններում, մեծ յուզումով լսել են նրա «Խօսք իմ որդուն» յուզիչ, եւ ամէն հայի սրտին մօտիկ բանաստեղծութիւնը։

Կապուտիկեանը եթէ ուրիշ ոչինչ էլ գրած չլինէր, այս մէկը, իր ոգով ու շունչով, բաւական էր նրան նշերի մի տեղ սպահովելու հայրենի քերթողութեան անդաստանում, մինչ նա՝ իր հարիւրաւոր գեղեցիկ բանաստեղծութիւններից բացի՝ ունի գեղարուեստական արձակներ, որոնք եւս իրենց ոճով ու խորքով պակաս չեն բանաստեղծական ոգուց եւ յուզիչ ու ազդու պատկերներից։

Ահա հէնց այս պատճառով էլ այստեղ ես պիտի խօսեմ նրա միայն մէկ՝ «Խճանկար հոգու եւ քարտէզի գոյներից» ժողովածուի մասին, որ ունի աւելի քան 500 էջ, լոյս է տեսել Երեւանում 1976 թուին եւ գրուած է օրագրի ձեւով։

Ըստ գրքի հրատարակչական մի քանի տող ներկայացման, այս գիրքը բովանդակութեամբ ճամբորդական տպաւորութիւններ է. ուստի առաջին պահին զարմանում ես, թէ բանաստեղծուհին ինչո՞ւ է իր տպաւորութիւնների համար ընտրել բովանդակութեան հետ չկապուած, եւ որ աւելի ճիշտն ու կարեւորն ուղղ, եւ որ աւելի ճիշտն ու կարեւորն է, մի փոքր էջ՝ դժուարահնչիւն ու տարօրինակ մի խորագիր, որն ընթերցողը մինչեւ գրքի աւարտումն եւս դժուարանում է իր մտքում պահել։

Բայց... հակառակ այս սկզբնական ու անմիջականօրէն եզրակացուած կարծիքին, ինչքան առաջանում ես ու խորանում գրքի մէջ, այնքան աւելի ես կլանւում այդ հոգու եւ քարտէզի գոյներով խճանկարի ոլորտների մէջ ու այնքան աւելի համոզւում ու խոր ձեւով զգում վերնագրի տեղին ընտրութիւնն ու յատուկ նշանակութիւնը։

Իրապէս, գրքի մէջ շատ աւելի տարբեր գոյներ կան՝ քան որեւէ գունագեղ քարտէզի մէջ։ Ամէն տեսակ գոյն կայ՝ նրա մէկը մի-ւսից պայծառ երանգների մէջ, Սփիւռքն ու Հայրենիքը հաւասարապէս տեղ են գտել այնտեղ իրենց խոհերով, տարբեր մտածումներով, լուսատեսութեամբ ու մտահոգութիւններով։

Գրքում առկայ են մեծ ու փոքր ազգերի գերիչխանութիւններն ու ոտքերի տակ ճզմուելները, հայ դատը, նրա ոտնահարումն ու ՄԱԿի Մարդկային Իրաւունքների Յանձնախմբի ներկայացրած ցեղասպանութեան 30րդ վէճի յետ մղումը, մարդու եւ իշխանութիւնների խիղճ ու անխիղճ արարքները, ճնշողի ու ճնշուողի հետ դէմ դիմաց, շատ պարզ ձեւով, ինչպէս սեղանի վրայ փռուած մի քարտէզ, բացուած քո առջեւ։

Թէեւ հեղինակն ինքն իր առելիքն ասում է հատատուն շեշտով ու համոսում է հատատուն շեշտով ու այոյի տեղ դնելով, բայց երբեմն դու այոյի տեղ կարող ես ոչ հասկանալ, իսկ ոչի տեղ՝ այո։ Եթէ դու այոն ես ուզում, իսկ ինքը ոչը, դրա ընտրութիւնն ու ներքին ծալքերի ըմբռնումի կերպը մնում է ընթերցողին՝ հասկանալու այնպէս՝ ինչպէս որ ինքդ ես ուզում եւ կամ այնպէս՝ ինչպէս որ ինքն է ուզում, որ դու էլ ուզենաս։

«Խճանկար...»ը լոկ մի ճամբորդական տպաւորութիւններ չէ, նրա մէջ կան հոգու նուրբ զգացումների, խորը գաղափարների արտացոլումներ, եւ այդ բոլորը քեզ այնպէս է ազդում ու ճնշում բազմակողմանի միջոցներով, որ թէ՛ կարող ես ուրախանալ ու հպարտանալ

© National Library of Armenia

եւ թէ տխրել ու զայրանալ, յուզուել ու արտասուել։

Այս բոլորից նրան ոչ մի փոյթ, նա արդէն ինքն էլ նոյն ապրումներն է ունեցել իր ժամանակին եւ այսօր այդ բոլորը ասում է դարձեալ քեզ համար, բայց այնքան պարզ ու բացայայտ, որ իր ներքինն է՝ համարձակ ու շեշտակի, իակ դու ինչպէս որ կ'ուզես եղիր ու մտածի։

Կապուտիկեանն իր գրքում չի քաշւում ոչ-ընկերվարական երկրներին վատաբանելուց, բայց եւ ասելուց նրանց բարձր առաջադիմութեան, ինչպէս եւ Խորհրդային Միութեան դեռ կտրելիք ճամբայի ու մեր փոքրիկ Հայրենիքի դժուարութիւնների մասին։

«Ասենք այն, որ մեր սանիտարական հանգոյցները անբարեկարգ են, որ խանութներն ու փողոցները թափթփուած են, որ կոպտութիւն կայ, որ «Անի» օթելի վերելակը, ինչպէս գանդատւում էին մոնրէալցի Քաւլովեանները «երբ նայիս՝ կ'աւրուի...», բայց այդուհանդերձ Հայաստանը Հայինն է, մօտ Հայի սրտին. հողի ձգողական ուժն ու փաւստոսեան Արշակ Թագաւորի ասացուածքը՝ վէպ ու աւանդութիւն չէ, այլ իրականութիւն ու ճշմարտութիւն...» (էջ 495)։

«Անիմանալի մի ուժ ունեն իրենց մէջ պանդուխտ եկեղեցիները։ Եթէ Հայաստանում եկեղեցիների դարաւոր շունչն է քեզ համակում լոյսով ու երկիւղածութեամբ, — արտասահմանում ուրիշ է բոլորովին։ Ի՞նչ նիւթից էլ լինի այն կառուցուած, յատակը խճապատ լինի թէ սալարկուած, թւում է՝ Հայաստանից բերած ու Արշակ արքայի ոտքերի տակ փռած հողն է այնտեղ, այդ յատակին, ուր ոտքը դնելիս հայը վերպարանափոխւում է կարծես..... ու կարծրացած շուրթերը ակսում են փափկել-չչնջալ. Հայր մեր որ յերկինս ես...» (էջ 479)։

Կապուտիկեանը գիտէ իր մտածածն ու մտքում եղածը, ինչ դաղափար էլ լինի դա, ընթերցողի հոգու ու մտքի մէջ խորացնել, ճամբայ բացել, աւելի ճիշտը՝ ճեղքել ու մէջը տեղաւորել։

Կարդացէք Գարոյր Սեւակի մասին գրուածը (էջ 469), եւ դուք կը զգաք այն ինչ որ կարող է թելադրել ամէնէն ուժեղ եղերերգը։

«Մահեր կան, որ շատ աւելի է անբաժան մեզնից, աւելի է ներկայ։ Նրա իրական մեծութեանը միացաւ կորուստի ցաւը, ափսոսանքը, մահուան հանդամանքների ողբերգութիւնը։ Սրտերում անընդհատ կսկիծ անթեղելը նոյնպէս ապրելու ձեւ է։ Իր թողած գրքերում, իր գիր ու թղթերում ապրելուց զատ՝ Գարոյն ապրում է նաեւ ժողովրդի այդ կսկիծի մէջ»։

Խօսելով Սողոմոն Թեհլերեանի կողմից Թալեաթին սպանելու մասին, այնպէս է եզրակացնում, որ Գարոյր Սեւակն էլ է մասնակցել այդ սպանութեան իր դրիչով՝ իր «Անլուելի զանգակատուն»ով ու «Եռաձայն պատարագ»ով...։ «"Անլուելի զանգակատուն"ը Մեծ Եղեռնի գոհերի առաջին յուշարձանն է Հայաստանում կառուցուած Ծիծեռնակաբերդի յուշարձանից շատ աւելի առաջ...»։

Իր նկարագրութիւնները, լինեն դրանք անձանց հանդիպումներ, հաւաքոյթներ, թէ համեստ մի տան, չքեղ մի չէնքի այցելութիւններ, հարազատ են, պարզ ու պատկերաւոր։

Գրքում գեղեցիկ ու պատկերաւոր տողեր կան հայ ժողովրդի վրիժառու բազուկներ՝ Սողոմոն Թեհլերեանի, Տաճատ Թերլիմեզեանի եւ մեր հերոսների մասին (էջ 323–325), ինչպէս եւ այն բոլոր հերոսամարտերի, որոնք կազմակերպուեցին Վանում, Շատախում, Սասունում, Ուրֆայում, Զէյթունում, Շաբին Քարահիսարում եւ այլ վայրերում։

«Խճանկար...»ում շատ են յուզիչ ու ազդու տողերը եւ վառ ազգային շունչը, թէկուզ լինեն նաեւ բազմաթիւ էջեր գրուած դաղափարախօսական ներշնչումով։ Բայց դրանց մէջ մեզ համար կարեւորները առաջիններն են, եթէ երբեմն դրանք ասուած լինեն անգամ երկրորդական անձերի բերանով։

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԱԲԵՂԵԱՆ ՑԱՍՄԻԿ ՍՈՒՐԷՆԻ. – Իսահակեանը եւ ժողովրդական էպոսը։ *Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրտ.* 1975, էջ 192, *տպաքանակ՝* 3000։

ԱԲՈՒՍԱՑԻԴ. – Ցաղազս կազմութեան մարդոյն։ *Աշխատասիրութեամբ՝ Ս. Ա. Վարդանեանի։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրտ.* 1974, էջ 235, *տպաքանակ՝* 1000։ (*Ցառաջաբան եւ ուսումնասիրութիւն՝ ռուսերէն, բառարան, անգլիերէն ամփոփոյթ*)։

ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՀԵՆՐԻԿ ՀԱՑՐԻԿԻ.– Ժամանակի երկու դէմքը. վաւերագրական ակնարկ Վ. Ի. Լենինին զինակից Ստ. Շահումեանի, Ս. Սպանդարեանի եւ ուրիշների մասին։ *Երեւան, «Սովետական Գրող» Հրտ.* 1980, էջ 300, *տպաքանակ՝* 5·000։

ԱԲՐԱՀԱՄՈՎԻՉ Մ. Ի. եւ ՍՏԱՐՈՏՈՒԲՑԵՒ Մ. Տ. – Մաթեմատիկա (*Հանրահաշիւ եւ տարրական ֆունկցիաներ*)։ *Երեւան, «Լոյս» Հրտ.* 1978, էջ 349, *տպաքանակ՝* 15·000։

ԱԲՐԱՀԱՄՈՎԻՉ Մ. Ի. եւ ՍՏԱՐՈԴՈՒԲՑԵՒ Մ. Տ. – Մաթեմատիկա (*Երկրաչափութիւն եւ եռանկիւնաչափական ֆունկցիաներ*)։ *Երեւան, «Լոյս» Հրտ.* 1978, էջ 475, *տպաքանակ՝* 15·000։

ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՍԼԱՎԻԿ ԳԱՐՍԵՒԱՆԻ.– Հայ լուսաւորական Ռէալիզմ։ *Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրտ.* 1980, էջ 152։

ԱՂԱՑԵԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԳՐԱՏԻ. – Տերմինագիտութիւն։ *Երեւան, Պետ. Հմլս. Հրտ.* 1970, էջ 52։

ԱՂԱՒՆԻ. – Բարի լոյս, Արեգ։ *Երեւան, «Սովետական Գրող» Հրտ.* 1980, էջ 387, *տպաքանակ՝* 20·000։

ԱՃԱՌԵԱՆ ՀՐԱՉԵԱՑ. – Բանասիրական ուսումնասիրութիւններ (*Արտատպումներ՝ հայագիտական յօդուածներու*)։ *Կազմեցին՝ Ա. Մաղոյեան եւ Ա. Տէր-Ստեփանեան։ Ծանօթագրութիւնները՝ Ա. Մաղոյեանի։ Խմբագիրներ՝ Էդ. Աղայեան, եւ Էմ. Գիվազեան։ Երեւան, Պետ. Հմլս. Հրտ.* 1976, էջ 240, *տպաքանակ՝* 3·000։

ԱՃԷՄԵԱՆ ՎԱՐԴԱՆ Մ. – Ծպիտոներ (149 *Ծաղրանկարներ*)։ *Երեւան, «Սովետական Գրող» Հրտ.* 1977, էջ 152, *տպաքանակ՝* 5·000։

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ. – Մատենագրութիւն։ *Հրատարակութիւն՝ թարգմանութեամբ, յառաջաբանով եւ ծանօթագրութիւններով՝ Աբրահամեան Ա. Գ. եւ Պետրոսեան Գ. Բ.։ Երեւան, «Սովետական Գրող» Հրտ.* 1979, էջ 400, *տպաքանակ՝* 20·000։

ԱՍՄԱՐԵԱՆ ԼԵՒՈՆ ԱՇՈՏԻ. – Հայ գրական քննադատութիւնը ԺԹ. դարի 70–80ական թուականներին։ *Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրտ.* 1979, էջ 352, *տպաքանակ՝* 2000։

ԱՍՄԱՐԵԱՆ ԼԵՒՈՆ ԱՇՈՏԻ. – Գաբրիէլ Սունդուկեան. կեանքը եւ ստեղծագործութիւնը։ *Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրտ.* 1980, էջ 122, *տպաքանակ՝* 1500։

ԱՐԱՄԵԱՆ ՌԱՖԱՑԷԼ ԳԷՈՐԳԻ. – Արեւոտ անձրեւ (*Պատմուածքներ, վիպակներ եւ ակնարկներ*)։ *Երեւան, «Սովետական Գրող» Հրտ.* 1980, էջ 460, *տպաքանակ՝* 10·000։

ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ՍԵՒԱԿ ՑԱՐՈՒԹԻՒՆԻ. Սովետահայ վէպը։ *Երեւան, «Սովետական Գրող» Հրտ.* 1980, էջ 466, *տպաքանակ՝* 5000։

ԱՐԼԱԶՈՐՈՎ ՄԻԽԱՅԻԼ Ս. – Կոնստրուկտորներ (*Թրգմն. Հ. Հ. Զաքերթեան*)։ [*Սովետական օդանաւային գիտարուեստի ականաւոր ստեղծագործներու մասին*]։ *Երեւան, «Հայաստան» Հրտ.* 1978, էջ 350, *տպաքանակ՝* 15·000։

© National Library of Armenia